ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
25/02/2015թ թիվ 47-Լ որոշմամբ
Փոփոխված է 31/08/2015թ թիվ 84-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

---------- Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
(վերջին փոփոխությունը գրանցված է)
ՀՀ կենտրոնական բանկում

«07» հոկտեմբերի 2015թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

---------- Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-029

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ)

ԵՐԵՎԱՆ – 2015

ԲԱԺԻՆ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարների գրանցման, պատահարի վայր ժամանման և ապահովագրական պատահարի վայրում արձանագրության կազմման կարգն ու պայմանները, ինչպես նաև ապահովագրական ընկերությունների՝ ապահովագրական պատահարի սպասարկման իրավասությամբ օժտված ներկայացուցիչների և պատահարի գրանցման համար անհրաժեշտ տեխնիկածրագրային ապահովվածության նկատմամբ նվազագույն պահանջները:

ԳԼՈՒԽ 2

ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կանոններում օգտագործվող հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստով՝

1) **Բյուրո՝** «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ,

2) **ապահովագրական ընկերություն՝** Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերություն,

3) **Օրենք՝** «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

4) **պատահարի սպասարկում՝** ԱՊՊԱ պատահարի վայր ժամանում, պատահարի արձանագրում, տուժողներից, նրանց ներկայացուցիչներից կամ իրավահաջորդներից փաստաթղթերի ընդունում և հատուցման կարգավորման համար պատասխանատու ստորաբաժանմանը փոխանցում, տուժողներին անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում, ինչպես նաև ապահովագրական ընկերության կողմից հատուցումների վճարման գործընթացի աջակցում,

5) **պատահար սպասարկող՝** ԱՊՊԱ պատահարի սպասարկման իրավասություն ունեցող անձ:

3. Սույն կանոններում օգտագործվող այլ հասկացությունները ունեն Օրենքում կիրառվող իմաստը:

ԲԱԺԻՆ 2

ԳԼՈՒԽ 3

ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐԻ ԳՐԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

4. Ապահովագրական ընկերության՝ ԱՊՊԱ պատահարի գրանցման համար պատասխանատու ներկայացուցիչները պետք է մշտապես ապահովված լինեն

այնպիսի տեխնիկածրագրային միջոցներով, որոնք կերաշխավորեն ԱՊՊԱ պատահարի գրանցման գործընթացի կազմակերպումը առնվազն սույն կանոնների 4-րդ գլխով սահմանված պահանջներին համապատասխան:

5. Յուրաքանչյուր ապահովագրական ընկերություն պետք է ունենա բավարար թվով պատահար սպասարկողներ և այնպես տեղաբաշխի վերջինների սպասարկման շրջանները, որպեսզի օբյեկտիվորեն հնարավոր լինի Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ողջ տարածքում Բյուրոյի կանոններով նախատեսված դեպքերում, կարգով և ժամկետներում ապահովել տվյալ ընկերության կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագրերի գծով տեղի ունեցած ապահովագրական պատահարների սպասարկումը, ինչպես նաև Բյուրոյին հասցեագրված դիմումների և դրանց հետ կապված փաստաթղթերի ընդունումը և փոխանցումը Բյուրո, Բյուրոյի կողմից հատուցումների վճարման գործընթացի աջակցությունը և Բյուրոյի կանոններով նախատեսված այլ պարտականությունների կատարումը: Ընդ որում, յուրաքանչյուր ապահովագրական ընկերության պատահար սպասարկողների թվաքանակը չպետք է պակաս լինի սույն կանոնների Հավելված 1-ի աղյուսակով համապատասխան տարածաշրջանի համար սահմանված պատահար սպասարկողների քանակից:

6. Պատահար սպասարկողները պետք է ունենան փաստացի և մշտական գործունեության վայր իրենց կողմից սպասարկվող տարածաշրջանում, շուրջօրյա հասանելիությամբ բջջային հեռախոսակապ, ինչպես նաև էլեկտրոնային փոստ:

7. Ապահովագրական ընկերությունները իրենց անունից հանդես եկող պատահար սպասարկողների ցանկը Բյուրո են ներկայացնում սույն կանոններն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ցանկի յուրաքանչյուր փոփոխություն կամ լրացում՝ փոփոխությունները և (կամ) լրացումները տեղի ունենալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ Հավելված 2-ով սահմանված ձևով:

ԳԼՈՒԽ 4. ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Ապահովագրական ընկերությունները իրենց հետ կնքված ԱՊՊԱ պայմանագրում նշված ավտոտրանսպորտային միջոցների մասնակցությամբ ԱՊՊԱ պատահարի վերաբերյալ ծանուցվելու դեպքում անմիջապես ձեռնարկում են հետևյալ գործողությունները.

1) Պարզում և գրանցում են պատահարի վերաբերյալ առնվազն ԱՊՊԱ պայմանագրի պայմանների 7.3 կետով նախատեսված տեղեկատվությունը:

2) Բյուրոյի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված՝ տեսանկարահանող սարքերով հագեցված հասցեներից մեկում պատահարը տեղի ունեցած լինելու դեպքում պարզում են, թե նշված սարքերից որևէ մեկով, արդյոք, տեսագրվու՞մ են պատահարին ներգրավված բոլոր ավտոտրանսպորտային միջոցների (իրենց հաշվառման համարանիշերով) հետվթարային դիրքերը, ինչպես նաև տեսագրվե՞լ է ԱՊՊԱ պատահարի տեղի ունենալու պահը և այդ մասին ձայնագրվող հեռախոսի միջոցով տեղեկացնում են պատահարի մասին հայտնած անձին:

3) Պատահարը սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված հասցեներում տեղի ունեցած չլինելու կամ համապատասխան տեսանկարահանող սարքով պահանջվող տեսագրումը չիրականացվելու դեպքում ճշտում են, թե արդյոք պատահարի վայրում առկա՞ է բջջային հեռախոս կամ այլ էլեկտրոնային սարք, որի մեջ տեղադրված է Բյուրոյի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված՝ պատահարների գրանցման ծրագրերից որևէ մեկը, և, առկայության դեպքում, առաջարկում են ստեղծել և ուղարկել ծրագրով նախատեսված լուսանկարները՝ անհրաժեշտության դեպքում տրամադրելով համապատասխան խորհրդատվություն: Սույն ենթակետով նախատեսված պահանջը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ ըստ տրամադրված տեղեկատվության՝ պատահարի հետևանքով որևէ անձի կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվել:

4) Սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքում ուղարկված լուսանկարները սահմանված պահանջներին բավարարելու դեպքում հաստատում են դրանք:

5) Օրենքով նախատեսված դեպքերում հայտնում են համաձայնեցված հայտարարագիր կնքելուն իրենց համաձայնության կամ անհամաձայնության մասին՝ համաձայնության դեպքում նաև բացատրելով, որ համաձայնեցված հայտարարագիր կնքվելու դեպքում տուժողին վճարման ենթակա հատուցման գումարը չի կարող գերազանցել 200.000 դրամը՝ անկախ փաստացի վնասի չափից: Ընդ որում, ապահովագրական ընկերությունը բոլոր դեպքերում համաձայնություն չի տալիս կողմերին՝ կնքելու համաձայնեցված հայտարարագիր, եթե տվյալ ապահովագրական պատահարի հետևանքով վնաս է պատճառվել ապահովագրական պատահարում ներգրավված երկու կողմերից բացի այլ անձի գույքին կամ պատահարում ներգրավված անձի անշարժ գույքին:*:*

6) Հայտնում են պատահարի վայր պատահար սպասարկողի ժամանման կամ չժամանման մտադրության մասին՝ բացատրելով պատահարի մասնակիցներին իրենց հետագա գործողությունները՝ ներառյալ թույլատրելով կամ չթույլատրելով ճանապարհի բանուկ մասից տեղաշարժել պատահարին ներգրավված ավտոտրանսպորտային միջոցները և ապահովագրական պատահարի հետ կապ ունեցող առարկաները և, հնարավորության դեպքում, ցուցումներ տալով պատահարի հետևանքով հնարավոր վնասները նվազեցնելու վերաբերյալ: Ընդ որում, սույն ենթակետով նախատեսված թույլտվության հիման վրա պատահարին ներգրավված ավտոտրանսպորտային միջոցները և (կամ) ապահովագրական պատահարի հետ կապ ունեցող առարկաները պատահարի վայրից տեղաշարժելը, իսկ պատահարի վայր չժամանելու մտադրություն հայտնելու դեպքում՝ նաև ապահովագրական պատահարի վայրը լքելը, չեն կարող դիտվել որպես ԱՊՊԱ պայմանագրի պայմանների խախտում կամ այլ կերպ օգտագործվել ապահովագրական ընկերության կողմից ապահովադիր հանդիսացող անձի կամ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի, ինչպես նաև տուժողի նկատմամբ հետագայում որևէ բացասական հետևանքների

կիրառման համար: Սույն պահանջը չի բացառում ապահովագրական ընկերության կողմից Բյուրոյի կանոններով նախատեսված՝ ապահովագրական հատուցման առանձնահատուկ ընթացակարգերի և պահանջների կիրառումը:

7) Պատահարի մասին ծանուցում են ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական կառավարման լիազոր մարմնին կամ դա պահանջում են իրականացնել պատահարի մասնակիցներին՝ բացատրելով ապահովագրական հատուցման գործընթացում այդ պահանջի չկատարման հնարավոր հետևանքները: Սույն ենթակետով սահմանված պահանջը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ սույն կետի 2-րդ կամ 3-րդ ենթակետով սահմանված կարգով կատարվել է պահանջվող տեսագրումը, և (կամ) սույն կանոններով սահմանված կարգով պատահարն արձանագրվել է պատահար սպասարկողի կողմից, և (կամ) կատարվել են պահանջվող լուսանկարները, և (կամ) ապահովագրական ընկերության համաձայնությամբ՝ ապահովագրական պատահարի հետ կապված կազմվել է համաձայնեցված հայտարարագիր: ***(8-րդ կետի 5-րդ ենթակետը լրաց. է 31/08/2015թ թիվ 84-L)***

9. Ապահովագրական ընկերությունը պարտավոր է հայտնել պատահարի վայր պատահար սպասարկողի ժամանման կամ չժամանման մտադրության մասին՝ թույլատրելով կամ չթույլատրելով պատահարի բանուկ մասից տեղաշարժել պատահարին ներգրավված ավտոտրանսպորտային միջոցները և ապահովագրական պատահարի հետ կապ ունեցող առարկաները, պատահարի մասին ծանուցվելուց հետո՝ տասը րոպեի ընթացքում:

10. Ապահովագրական ընկերությունը պարտավոր է թույլատրել պատահարի բանուկ մասից տեղաշարժել պատահարին ներգրավված ավտոտրանսպորտային միջոցները և ապահովագրական պատահարի հետ կապ ունեցող առարկաները, եթե սույն կանոնների 8-րդ կետով սահմանված գործողությունների ձեռնարկման ընթացքում պարզել է, որ որևէ տեսանկարահանող սարքով (սարքերով) տեսագրվել են պատահարին ներգրավված բոլոր ավտոտրանսպորտային միջոցների (իրենց հաշվառման համարանիշերով) հետվթարային դիրքերը, ինչպես նաև ԱՊՊԱ պատահարի տեղի ունենալու պահը, կամ ուղարկվել են սահմանված պահանջներին բավարարող տվյալ իրավիճակի համար նախատեսված բոլոր լուսանկարները, բացառությամբ ապահովագրական ընկերության ներքին իրավական ակտերով նկարագրված այն դեպքերի, երբ տվյալ պատահարին ներգրավված ավտոտրանսպորտային միջոցները և ապահովագրական պատահարի հետ կապ ունեցող առարկաները բանուկ մասից տեղաշարժելը անհնարին կդարձնի ապահովագրական զեղծարարության կանխարգելումը կամ տվյալ պատահարի հանգամանքների ամբողջական վերականգնումը, ինչպես նաև այն դեպքերի, երբ ըստ տրամադրված տեղեկատվության՝ պատահարի հետևանքով որևէ անձի կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվել: Ընդ որում, սույն կետով նախատեսված ներքին իրավական ակտերով սահմանված հիմքերով պատահարի բանուկ մասից

պատահարին ներգրավված ավտոտրանսպորտային միջոցները և ապահովագրական պատահարի հետ կապ ունեցող առարկաները տեղաշարժելու թույլտվության չտրամադրման դեպքերը չպետք է գերազանցեն տվյալ ամսվա ընթացքում համապատասխան ապահովագրական ընկերության կողմից սպասարկված այն պատահարների տասը տոկոսը, որոնց գծով առկա է համապատասխան տեսագրությունը կամ լուսանկարները:

11. Ապահովագրական ընկերության ներքին իրավական ակտերով սահմանվում են այն չափանիշները, որոնց առկայության դեպքում պատահար սպասարկողները ժամանում են պատահարի վայր՝ անկախ տեսանկարահանող սարքով (սարքերով) պատահարին ներգրավված բոլոր ավտոտրանսպորտային միջոցների (իրենց հաշվառման համարանիշերով) հետվթարային դիրքերը, ինչպես նաև ԱՊՊԱ պատահարի տեղի ունենալու պահը տեսագրված կամ սահմանված պահանջներին բավարարող տվյալ իրավիճակի համար նախատեսված բոլոր լուսանկարները ուղարկված լինելու հանգամանքից: Ապահովագրական ընկերությունները սույն կետով և սույն կանոնների 10-րդ կետով նախատեսված իրավական ակտերը Բյուրո են ներկայացնում սույն կանոններն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրանց յուրաքանչյուր փոփոխություն կամ լրացում՝ փոփոխությունները և (կամ) լրացումներն ուժի մեջ մտնելուց մեկ աշխատանքային օր առաջ:

12. Բյուրոյի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված՝ տեսանկարահանող սարքերով հագեցված հասցեներից մեկում տեղի ունեցած պատահարը նշված սարքերից որևէ մեկով նկարահանված լինելու դեպքում ապահովագրական ընկերությունը ողջամիտ ժամկետում միջոցներ է ձեռնարկում համապատասխան տեսանյութն ստանալու և գործին ամրակցելու համար:

13. Բյուրոն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում և օրական կտրվածքով թարմացնում է իր հետ համագործակցող կազմակերպությունների կողմից տեղադրված տեսանկարահանող սարքերով հագեցված հասցեների, ինչպես նաև իր կողմից թույլատրված պատահարների գրանցման ծրագրերի ցանկերը:

14. Բյուրոն օգտագործման համար թույլատրում է պատահարների գրանցման այն ծրագրերը, որոնք բավարարում են առնվազն հետևյալ պահանջներին.

1) Ապահովում են պատահարի և ապահովադրի վերաբերյալ տվյալների ծանուցումը պատահարը գրանցողին:

2) Ապահովում են պատահարի վայրի տեղորոշումը պատահարը գրանցողի կողմից:

3) Լուսանկարների ստեղծման հավելվածը պարունակում է սխեմատիկ պատկերների տեսքով ցուցումներ, որոնք օգնում են հավելվածի օգտատիրոջը ընտրել ԱՊՊԱ պատահարի՝ Հավելված 3-ով նախատեսված տեսակը և կատարել տվյալ տեսակի համար սահմանված դիրքերից լուսանկարներ:

4) Լուսանկարների ստեղծման հավելվածը մերժում է ամրակցել այն լուսանկարները, որոնք բավարար չափով հստակ չեն (կիզակետից դուրս են (ֆոկուսից ընկած են),

շաղված են, առկա չէ բավարար չափով լուսավորվածություն և այլն), և առաջարկում է կրկին կատարել համապատասխան լուսանկարը:

5) Ապահովում են ծրագրի միջոցով ստեղծված լուսանկարների՝ իրական ժամանակի ռեժիմում ուղարկումը պատահարը գրանցողին:

ԳԼՈՒԽ 5. ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐԻ ՎԱՅՐ ԺԱՄԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

15. Ապահովագրական ընկերությունները պատահարի վայր պատահար սպասարկողի ժամանման մտադրության մասին հայտնելու դեպքում պարտավոր են պատահարի վայրում ապահովել վերջինի ժամանումը ոչ ուշ, քան պատահարի վերաբերյալ ծանուցվելուց հետո՝ Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզկենտրոններում 35 րոպեի, իսկ դրանցից դուրս՝ 80 րոպեի ընթացքում:

16. ԱՊՊԱ պայմանագրով ապահովադիր հանդիսացող անձի կամ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի, ինչպես նաև տուժողի կողմից սույն կանոնների 15-րդ կետով նախատեսված ժամկետից հետո համապատասխան պատահար սպասարկողի ժամանելուն չսպասելը և ապահովագրական պատահարի վայրը լքելը կամ ավտոտրանսպորտային միջոցը կամ ապահովագրական պատահարի հետ կապ ունեցող առարկաները տեղաշարժելը ապահովագրական ընկերության կողմից չի կարող դիտվել որպես ԱՊՊԱ պայմանագրի պայմանների խախտում կամ այլ կերպ օգտագործվել ապահովագրական ընկերության կողմից նրանց նկատմամբ հետագայում որևէ բացասական հետևանքների կիրառման համար:

ԳԼՈՒԽ 6
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

17. ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարների արձանագրումը իրականացվում է պատահար սպասարկողի կողմից սույն կանոնների Հավելված 4-ով սահմանված պատահարի արձանագրման ձևի (այսուհետ՝ Պատահարի արձանագրություն) լրացման՝ ներառյալ սույն կանոններով պահանջվող համապատասխան լուսանկարների իրականացման միջոցով:

18. Պատահար սպասարկողը պարտավոր է պատահարը արձանագրել համաձայն սույն կանոնների և անձնական պատասխանատվություն է կրում պատահարի ոչ պատշաճ արձանագրման համար:

19. Պատահարի արձանագրությունը լրացվում է պատահարի վայրում մեկ օրինակից, որին կցվում են սույն կանոններով պահանջվող համապատասխան լուսանկարները, և պահպանում է պատահարի արձանագրությունը լրացրած անձի կողմից:

20. Պատահար սպասարկողի կողմից պետք է պատահարի վայրում հնարավորինս արագ կերպով արձանագրվեն մասնակից ավտոտրանսպորտային միջոցների հետվթարային դիրքերը՝ համապատասխան լուսանկարների կատարման և սույն կանոններով սահմանված սխեմայի կազմման միջոցով, այնպես, որ անհարկի չձգձգվի երթևեկության հետագա խոչընդոտումը:

21. Պատահարը սպասարկողը պատահարի լրացված արձանագրության պատճենները՝ «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ կամ էլեկտրոնային կրկնօրինակները տրամադրում է՝

1) պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վարորդներին և (կամ) դրանց սեփականատերերին՝ վերջիններիս պահանջով՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում,

2) պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրած ապահովագրական ընկերություններին և/կամ Բյուրոյին՝ Օրենքով սահմանված կարգով Բյուրոյի կողմից հատուցման գործընթացների իրականացման պարագայում՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում:

22. Պատահարին մեկ ավտոտրանսպորտային միջոց ներգրավված լինելու դեպքում պատահարի արձանագրությունը լրացվում է միայն «Ա» ավտոտրանսպորտային միջոցի մասով: Երկուսից ավելի մասնակից ավտոտրանսպորտային միջոցների դեպքում Պատահարի արձանագրությունը ավելացվում է Պատահարի արձանագրության 1-ին էջի այնքան օրինակներով, որ հնարավոր լինի յուրաքանչյուր իրար բախված երկու ավտոտրանսպորտային միջոցները նկարագրել առանձին էջով, իսկ 3-րդ, 4-րդ և 5-րդ էջերից՝ այնքան օրինակով, որ հնարավոր լինի նկարագրել պատահարի մասնակից յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցի (դրա վարորդի, ուղևորների) գծով անհրաժեշտ տեղեկատվությունը, միևնույն ժամանակ հավելյալ լրացված էջերի վրա ավտոտրանսպորտային միջոց «Ա» և ավտոտրանսպորտային միջոց «Բ» հղումները պետք է փոխարինվեն այբուբենի հերթական տառերով կազմված հղումներով:

23. Պատահարի արձանագրության «պատահարի սխեմա» բաժնում առնվազն արտապատկերվում է պատահարի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը (առկայության դեպքում).

1) պատահարի մասնակից ավտոտրանսպորտային միջոցների հետվթարային դիրքերը՝ ներառյալ դրանց հեռավորությունները միմյանցից, ճանապարհի երթևեկելի մասի եզրերից և ճանապարհի երկայնքում որևէ հաշվարկման կետից,

2) պատկերված տրանսպորտային միջոցների վերաբերյալ հղումներ,

3) տրանսպորտային միջոցների արգելակման հետագծերը և դրանց երկարությունը,

4) պատահարի հետ առնչություն ունեցող ճանապարհային նշանները և լուսացույցերը,

5) ճանապարհային գծանշումները,

6) երթևեկության գոտիների և պատահարի մասնակից տրանսպորտային միջոցների տեղակայումը,

7) փողոցների (մայրուղի, նրբանցք և այլն) անվանումները և ուղղությունները,

8) պատահարի արդյունքում թափված բեկորների, հեղուկների և այլ հետքերի նկարագրությունը և տարածման տիրույթը,

9) ճանապարհածածկույթի նկարագրությունը:

24. Պատահարի արձանագրման «Լուսանկարներ» բաժնում արձանագրությանը կցվող լուսանկարները պետք է բավարարեն հետևյալ պայմաններին.

1) պետք է լուսանկարված լինեն առնվազն 12 մեգապիքսել թույլտվություն, մասշտաբի 5-անգամյա մեծացման հնարավորություն, մակրոլուսանկարահանման,

լուսարձակման և տեսալուսանկարահանման հնարավորություն ունեցող լուսանկարահանման խցիկով,

2) թերի լուսավորության դեպքում պետք է իրականացված լինեն լուսանկարչական ապարատի առդիր լուսարձակմամբ, իսկ անհնարինության դեպքում՝ լապտերի օգտագործմամբ,

3) վնասվածքների ու հետքերի լուսանկարման ժամանակ պետք է կիրառված լինի խցիկի մակրոլուսանկարահանման հնարավորությունը, որպեսզի լուսանկարում պարզ արտահայտված լինեն վնասվածքների ու հետքերի առանձնահատուկ հատկանիշները:

25. Պատահարին ներգրավված ավտոտրանսպորտային միջոցները պատահարի վայրից տեղաշարժված լինելու դեպքում (ներառյալ սույն կանոնների 4-րդ գլխի համաձայն՝ ապահովագրական ընկերության տրված թույլտվությամբ) պատահարի արձանագրման նկատմամբ սույն գլխով սահմանված պահանջները տարածվում են այնքանով, որքանով դրանք հնարավոր է կատարել հետվթարային նման պայմաններում՝ արձանագրության մեջ նշում կատարելով այդ մասին:

Հավելված 1
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի
25/02/2015 թ թիվ 47-Լ որոշմամբ հաստատված RL 1-029 կանոնների

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԱՀԱՐ ՍՊԱՍԱՐԿՈՂՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԼՂՀ-ՈՒՄ

Տարածաշրջաններ	Ներկայացուցիչների նվազագույն քանակը
Արագածոտն	1
Արարատ	1
Արմավիր	1
Գեղարքունիք	1
Լոռի	2
Կոտայք	1
Շիրակ	2
Սյունիք	3
Վայոց ձոր	1
Տավուշ	1
ԼՂՀ	2

Հավելված 2
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի
25/02/2015 թ թիվ 47-Լ որոշմամբ հաստատված RL 1-029 կանոնների

ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՄԲ ՕԺՏՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ (ՊԱՏԱՀԱՐ ՍՊԱՍԱՐԿՈՂՆԵՐԻ) ՑԱՆԿ

Քաղաք	Սպասարկվող տարածաշրջաններ (ներառյալ դրանց հարակից համայնքները)	Անվանում (անուն, ազգանուն)	Գործունեության վայրը (փաստացի գտնվելու հասցեն)	Հեռախոսա-համար (բջջային)	Էլ. փոստ

Հավելված 3
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի
25/02/2015 թ թիվ 47-Լ որոշմամբ հաստատված RL 1-029 կանոնների

Հ/Հ	«A» և «B» ավտոտրանսպորտային միջոցների գործողությունների նկարագրություն	Լուսանկարահանման սխեմա
1.	A: կանգի վիճակում կամ առաջընթաց շարժման մեջ է B: Բախվել է «A» ավտոտրանսպորտային միջոցի հետևի մասին	
2.	A: կանգի վիճակում կամ առաջընթաց շարժման մեջ է B: Բախվել է «A» ավտոտրանսպորտային միջոցի հետևի մասին	

3.	A: կանգի վիճակում կամ առաջընթաց շարժման մեջ է B: Բախվել է «A» ավտոտրանսպորտային միջոցի հետևի մասին	
4.	A: շրջադարձ կամ հետադարձ է կատարում B: Բախվել է «A» ավտոտրանսպորտային միջոցի հետևի մասին	
5.	A: շրջադարձ կամ հետադարձ է կատարում B: Բախվել է «A» ավտոտրանսպորտային միջոցի հետևի մասին	

6.	A: շրջադարձ կամ հետադարձ է կատարում B: Բախվել է «A» ավտոտրանսպորտային միջոցի հետևի մասին	
7.	A: մուտք է գործում երթևեկության աջ կամ ձախ մասում գտնվող կայանման տեղ B: Բախվել է «A» ավտոտրանսպորտային միջոցի հետևի մասին	
8.	A: մուտք է գործում երթևեկության աջ կամ ձախ մասում գտնվող կայանման տեղ B: Բախվել է «A» ավտոտրանսպորտային միջոցի հետևի մասին	

9.	A: մուտք է գործում երթևեկության աջ կամ ձախ մասում գտնվող կայանման տեղ B: Բախվել է «A» ավտոտրանսպորտային միջոցի հետևի մասին	
10.	A: կանգի վիճակում կամ առաջընթաց շարժման մեջ է B: հարակից ճանապարհից մուտք է գործում հիմնական ճանապարհ	

11.	A: կանգի վիճակում կամ առաջընթաց շարժման մեջ է B: հարակից ճանապարհից մուտք է գործում հիմնական ճանապարհ	
12.	A: կանգի վիճակում կամ առաջընթաց շարժման մեջ է B: ճամփեզրից, կողնակից, եզրաճանապարհից կամ մերձակա տարածքից առավելություն ընձեռող համապատասխան ճանապարհային նշանի կամ լուսացույցի ազդանշանի բացակայության պարագայում մուտք է գործում ճանապարհի երթևեկելի մաս	

13.	A: կանգի վիճակում կամ առաջընթաց շարժման մեջ է B: դուրս է գալիս կայանման տեղից		
14.	A: կանգի վիճակում կամ առաջընթաց շարժման մեջ է B: դուրս է գալիս կայանման տեղից		

15.	A: Փոխում է երթևեկության գոտին կամ գտնվում է գոտիների բաժանարար գծի վրա B: Փոխում է երթևեկության գոտին կամ գտնվում է գոտիների բաժանարար գծի վրա	
16.	A: Փոխում է երթևեկության գոտին կամ գտնվում է գոտիների բաժանարար գծի վրա B: Փոխում է երթևեկության գոտին կամ գտնվում է գոտիների բաժանարար գծի վրա	
17.	A: Փոխում է երթևեկության գոտին կամ գտնվում է գոտիների բաժանարար գծի վրա B: Փոխում է երթևեկության գոտին կամ գտնվում է գոտիների բաժանարար գծի վրա	

18.	A: Կանգի վիճակում կամ առաջընթաց շարժման մեջ է B: Փոխում է երթևեկության գոտին կամ գտնվում է գոտիների բաժանարար գծի վրա	
19.	A: Կանգի վիճակում կամ առաջընթաց շարժման մեջ է B: Փոխում է երթևեկության գոտին կամ գտնվում է գոտիների բաժանարար գծի վրա	
20.	A: Կանգի վիճակում, կամ առաջընթաց շարժման մեջ է B: Փոխում է երթևեկության գոտին կամ գտնվում է գոտիների բաժանարար գծի վրա	

21.	A: Կատարում է Ձախ շրջադարձ B: Վազանց է կատարում	
22.	A: Կատարում է Ձախ շրջադարձ դեպի երկրորդային ճանապարհ B: Վազանց է կատարում	
23.	A: գտնվում է հանդիպակաց երթևեկության գոտիները սահմանող բաժանարար գծի վրա B: գտնվում է հանդիպակաց երթևեկության գոտիները սահմանող բաժանարար գծի վրա	

24.	A: գտնվում է հանդիպակաց երթևեկության գոտիները սահմանող բաժանարար գծի վրա B: գտնվում է հանդիպակաց երթևեկության գոտիները սահմանող բաժանարար գծի վրա	
25.	A: գտնվում է հանդիպակաց երթևեկության գոտիները սահմանող բաժանարար գծի վրա B: գտնվում է հանդիպակաց երթևեկության գոտիները սահմանող բաժանարար գծի վրա	
26.	A: կանգի վիճակում, կամ առաջընթաց շարժման մեջ է B: հատել է հանդիպակաց երթևեկության գոտիները սահմանող բաժանարար գծը	

27.	A: կանգի վիճակում, կամ առաջընթաց շարժման մեջ է B: մուտք է գործել «A» ավտոտրանսպորտային միջոցի երթևեկության գոտի	
28.	A: կանգի վիճակում, կամ առաջընթաց շարժման մեջ է B: մուտք է գործել «A» ավտոտրանսպորտային միջոցի երթևեկության գոտի	
29.	A: վազանց է կատարում երրորդ տրանսպորտային միջոցի նկատմամբ B: դուրս է գալիս ավտոկայանատեղից կամ ճամփեզրից, ճանապարհի երթևեկելի մաս է մուտք գործում կողնակից կամ եզրաճանապարհից	

ՊԱՏԱՀԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հավելված 4
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի
25/02/2015 թ թիվ 47-Լ որոշմամբ հաստատված RL 1-029
կանոնների

«Ա» և «Բ» ՏՄ-ներից բացի այլ մնասված մեքենաներ	
Առկա են	Առկա չեն

Արձանագրության համար

Պատահարի ամսաթիվ, ժամ	

Անձնական վնաս	
Առկա են	Առկա չեն

ՏՄ-ներից բացի այլ մնասված օբյեկտ	
Առկա են	Առկա չեն

Պատահարի վայր

Ավտոտրանսպորտային միջոց «Ա»

ՏՄ տվյալներ
ՏՄ-ի տեսակը
Մակնիշը (մոդելը)
Հաշվառման համարանիշը
ՏՄ-ի հաշվառման վկայագրի համարը
հաշվառման վկայագրում նշվածից տարբերվող այլ հաշվառման համարանիշը (եթե առկա է)
Սեփականատեր
ՏՄ-ի սեփականատերը
Բնակության վայրը, հեռ.
Ապահովագրողը
Ընկերության անվանումը
ՏՄ վարորդի տվյալներ
Անունը
Ազգանունը
Ծննդյան ամսաթիվը
Բնակության վայրը, հեռ.
Վարորդական վկայականի համարը
Տրման ամսաթիվը և տվողը
Վարորդի կապի միջոցներ

ՊԱՏԱՀԱՐԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

«Ա»	*Համապատասխան վանդակները նշել խաչով*	«Բ»
	1. Հարվածել է իրեն համընթաց և միևնույն երթևեկության գոտում երթևեկող տրանսպորտային միջոցի ետնամասին	
	2. Ընթանում էր համընթաց սակայն այլ երթևեկության գոտում	
	3. Փոխում էր երթևեկության գոտին	
	4. Կատարում էր վազանց	
	5. Թեքվում էր աջ	
	6. Թեքվում էր ձախ	
	7. Հետընթաց էր կատարում	
	8. Մուտք էր գործում շրջանաձև երթևեկությամբ խաչմերուկ	
	9. Երթևեկում էր շրջանաձև երթևեկությամբ խաչմերուկ	
	10. Մուտք էր գործում կայանման տեղ	
	11. Դուրս էր գալիս կայանման տեղից կամ ոչ ընդհանուր օգտագործման ճանապարհներից	
	12. Բացում էր դուռը	
	13. Երթևեկում էր հակադարձ երթևեկության համար նախատեսված երթևեկության գոտիով	
	14. Մոտենում էր խաչմերուկին աջից	
	15. Անտեսել է ճանապարհը զիջելու կամ երթևեկությունը արգելող լուսացույցի ազդանշանը	
	16. Տրանսպորտային միջոցը կայանված էր / դադարի վիճակում էր	
	Նշված վանդակների քանակը	

Ավտոտրանսպորտային միջոց «Բ»*

ՏՄ տվյալներ
ՏՄ-ի տեսակը
Մակնիշը (մոդելը)
Հաշվառման համարանիշը
ՏՄ-ի հաշվառման վկայագրի համարը
հաշվառման վկայագրում նշվածից տարբերվող այլ հաշվառման համարանիշը (եթե առկա է)
Սեփականատեր
ՏՄ-ի սեփականատերը
Բնակության վայրը, հեռ.
Ապահովագրողը
Ընկերության անվանումը
ՏՄ վարորդի տվյալներ
Անունը
Ազգանունը
Ծննդյան ամսաթիվը
Բնակության վայրը, հեռ.
Վարորդական վկայականի համարը
Տրման ամսաթիվը և տվողը
Վարորդի կապի միջոցներ



Տեսանելի վնաս «Ա» ՏՄ

Տեսանելի վնաս «Բ» ՏՄ



Նշել խաչով տրանսպորտային միջոցի տեսանելի վնասի վայրը

* Չի լրացվում, եթե պատահարին մասնակից է միայն մեկ ավտոտրանսպորտային միջոց:

ՊԱՏԱՀԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՀԱՐԻ ՍԽԵՄԱ*

* լրացվում է համաձայն Պատահարի արձանագրման կարգի

ՊԱՏԱՀԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պատահարի նկարագրություն

Պատահարի վերաբերյալ ՃՈ-ի կողմից կազմվել է արդյոք եզրակացություն	ԱՅՈ	ՈՉ
Ներգրավված են արդյոք քրեական հետապնդման մարմիններ	ԱՅՈ	ՈՉ
Վարորդների կողմից ներկայացվել է արդյոք վարչական վարույթ իրականացնելու պահանջ	ԱՅՈ	ՈՉ

Արդյոք «Ա» ՏՄ-ի վարորդը անցել է սթափության վիճակի զննություն	ԱՅՈ	ՈՉ
«Ա» ՏՄ-ի օգտագործման նպատակը պատահարին նախորդող պահին		
Արդյոք «Ա» ՏՄ-ը անցել է տեխնիկական զննություն	ԱՅՈ	ՈՉ
«Ա» ՏՄ-ում գտնվող անձնական վնասվածք ստացած անձ (անձիք) և տեսանելի վնասվածքների բնույթը (եթե այդպիսիք կան)*		

Արդյոք «Բ» ՏՄ-ի վարորդը անցել է սթափության վիճակի զննություն	ԱՅՈ	ՈՉ
«Բ» ՏՄ-ի օգտագործման նպատակը պատահարին նախորդող պահին		
Արդյոք «Բ» ՏՄ-ը անցել է տեխնիկական զննություն	ԱՅՈ	ՈՉ
«Բ» ՏՄ-ում գտնվող անձնական վնասվածք ստացած անձ (անձիք) և տեսանելի վնասվածքների բնույթը (եթե այդպիսիք կան)*		

Պատճառվել է արդյոք անձնական վնասվածք հետիոտնի (եթե այո, ապա նշել հետիոտնի տվյալները)*	ԱՅՈ	ՈՉ

Պատճառվել է արդյոք վնաս նկարագրված ՏՄ-ներից բացի այլ գույքի (եթե այո, ապա նկարագրել վնասը)**	ԱՅՈ	ՈՉ

* Անձնական վնասվածք ստացած անձանց վերաբերյալ անհրաժեշտ է լրացնել վերջինների անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն, հեռախոսահամարը և հնարավորության դեպքում վնասվածքների բնույթը:

** «Ա» և «Բ» ՏՄ-ներից բացի այլ գույքին պատճառված վնասի դեպքում անհրաժեշտ է լրացնել վերջինիս գտնվելու վայրը (հասցեն), գույքի սեփականատիրոջ վերաբերյալ տվյալներ և հնարավորության դեպքում վնասի բնույթը:

ՊԱՏԱՀԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պատահարի մասնակիցների բացատրությունները

«Ա» Տրանսպորտային միջոցի վարորդ

« » _____ 20 թ, (վայրը) _____

1) Անուն, ազգանուն, հայրանուն

2) Ծննդյան թիվ, ծննդյան վայր, ազգությունը, քաղաքացիությունը

3) Աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսի համարը

4) Հասցեն, հեռախոսի համարը (բջջ. քաղաքային), ընտանեկան դրությունը

5) Երթևեկության ուղղությունը, երթևեկության արագությունը (վարորդի գնահատականով)

6) Արգելակումը և հարվածի ուղղությունը (կողմերը)

7) Ճանապարհային վիճակը

8) Եղանակային պայմաններ

9) Տեսանելիություն

10) Հարվածից հետո տեղաշարժվե՞լ է արդյոք տրանսպորտային միջոցը, եթե այո ապա որ ուղղությամբ և ինչքան

11) Քանի հարված է զգացվել

12) Տրանսպորտային միջոցի ուղևորները և (կամ) բեռը

13) Մեքենայի տեխնիկական վիճակը վթարից առաջ

14) Լուսացույցի կամ ճանապարհային նշանի առկայություն սարքինություն

15) Պատահարի վերաբերյալ այլ տեղեկություններ

_____ _____

Անուն, ազգանուն, հայրանուն Ստորագրություն

ՊԱՏԱՀԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պատահարի մասնակիցների բացատրությունները

«Բ» Տրանսպորտային միջոցի վարորդ

« » _____ 20 թ, (վայրը) _____

1) Անուն, ազգանուն, հայրանուն

2) Ծննդյան թիվ, ծննդյան վայր, ազգությունը, քաղաքացիությունը

3) Աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսի համարը

4) Հասցեն, հեռախոսի համարը (բջջ. քաղաքային), ընտանեկան դրությունը

5) Երթևեկության ուղղությունը, երթևեկության արագությունը (վարորդի գնահատականով)

6) Արգելակումը և հարվածի ուղղությունը (կողմերը)

7) Ճանապարհային վիճակը

8) Եղանակային պայմաններ

9) Տեսանելիություն

10) Հարվածից հետո տեղաշարժվել է արդյոք տրանսպորտային միջոցը, եթե այո ապա որ ուղղությամբ և ինչքան

11) Քանի հարված է զգացվել

12) Տրանսպորտային միջոցի ուղևորները և (կամ) բեռը

13) Մեքենայի տեխնիկական վիճակը վթարից առաջ

14) Լուսացույցի կամ ճանապարհային նշանի առկայություն սարքինություն

15) Պատահարի վերաբերյալ այլ տեղեկություններ

_____ Անուն, ազգանուն, հայրանուն

_____ Ստորագրություն

ՊԱՏԱՀԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լուսանկարներ*

Մասշտաբային լուսանկարներ նվազագույնը 10 մետր հեռավորությունից (հնարավորության դեպքում)		
Պատահարին մասնակից **բոլոր տրանսպորտային միջոցները,** դրանց **տեղակայվածությունը** • **տարածության մեջ** և դիրքերը միմյանց նկատմամբ • մոտակայքում առկա **ճանապարհային նշանների և այլ օբյեկտների** նկատմամբ *(կատարել առնվազն ութ լուսանկար, լուսանկարները կատարել առնվազն չորս տարբեր կողմերից՝ յուրաքանչյուր կողմից առնվազն երկու լուսանկար)*		
Պատահարի վայրում և (կամ) մոտակայքում առկա **ճանապարհային նշանները** հորիզոնական **գծանշումները** (առկայության դեպքում)		
Տվյալ պահին պատահարի վայրում և (կամ) մոտակայքում առկա **ճանապարհային նշանները**, ինչպես նաև • այն ճանապարհային նշանները, որոնք **մոտակայքում չեն, սակայն անմիջական նշանակություն կարող են ունենալ** տվյալ պատահարի հանգամանքների հետ համատեղ դիտարկելու պարագայում, օրինակ՝ գլխավոր և երկրորդական ճանապարհների, միակողմանի երթևեկության նշանները և այլն *(կատարել յուրաքանչյուր ճանապարհային նշանի առնվազն երկու լուսանկար՝ մոտ տարածությունից (ճանապարհային նշանի բնույթը պատկերող) և հեռվից (ճանապարհային նշանի տեղակայումը պատկերող)),*		
Պատահարի վայրում և (կամ) մոտակայքում առկա **լուսացույցերը** (առկայության դեպքում)		
Կատարել յուրաքանչյուր լուսացույցի առնվազն երկու լուսանկար, • լուսանկարները կատարել առնվազն երկու տարբեր կողմերից, • կատարել լուսացույցի լրացուցիչ հատվածամասերով կամ երթևեկության որոշակի ուղղություններով կարգավորելու համար նախատեսված լուսացույցների բնույթը պատկերող հավելյալ լուսանկար)		
Առկայության դեպքում պարտադիր լուսանկարել հետևյալ օբյեկտները		
• պատահարին մասնակից **բոլոր տրանսպորտային միջոցները՝** տարբեր կողմերից, այնպես, որ հնարավորության դեպքում լուսանկարներում տեսանելի լինեն դրանց հաշվառման համարանիշները (կատարել առնվազն չորս լուսանկար, լուսանկարները կատարել առնվազն չորս տարբեր կողմերից) • պատահարին մասնակից տրանսպորտային միջոցների և այլ օբյեկտների վրա տվյալ պատահարի արդյունքում **առաջացած վնասվածքներն ու հետքերը** (մասշտաբային լուսանկարում վնասվածքների հորիզոնական հարթության մեջ)՝ ինչպես առանձին-առանձին (վնասվածքների ընդհանուր տեսք, վնասվածքներում առկա առանձնահատուկ հետքերն առանձին, յուրաքանչյուր վնասված դետալն առանձին, տարբեր անկյունների տակ), այնպես էլ տրանսպորտային միջոցների և այլ օբյեկտների վրա առկա **վնասվածքների համադրությունները միմյանց նկատմամբ**, (յուրաքանչյուրից առնվազն երկու լուսանկար՝ տարբեր կողմերից), • պատահարին մասնակից **տրանսպորտային միջոցների փաստաթղթերը**, նույնականացման համարները, վազքի ցուցիչները, վարորդների վարորդական իրավունքի վկայականները:		
Պատահարի վայրում **առկա** օբյեկտները		
• դեպքի վայրում թափված **դետալները, մնացորդները և հետքերը** (հող, յուղ, ջուր, կոտրված դետալների բեկորներ և այլն) և դրանց ցրման (տարածման) գոտին, • տրանսպորտային միջոցների **անվադողերի** և **արգելակման հետքերը**, • տրանսպորտային միջոցների **ներկերի փոխադարձ անցումային հետքերը** և պատահարի հետևանքով առաջացած այլ հետքերը, ընդ որում, օբյեկտների լուսանկարումը պետք է լինեն մասշտաբային անվադողերի և արգելակման հետքերը պետք է լուսանկարվեն առնվազն երկու անգամ, մեկ անգամ՝ հետքի երկարությամբ՝ ցույց տալու համար տրանսպորտային միջոցի շարժման ուղղությունը, և մեկ անգամ՝ կողքից՝ ցույց տալու համար հետքի երկարությունը:		

*գունավոր և բարձր խտության

Արձանագրությունը կազմվեց _____
Ամսաթիվ, ժամ

Արձանագրությունը կազմեց՝

_____ _____
Անուն, հայրանուն, ազգանուն, սպասարկողի համարը* ստորագրություն

Արձանագրության

ը ծանոթացել ենք, այն կազմված է ճիշտ, որի համար ստորագրում ենք՝

Վարորդներ՝

1) _____ _____
Անուն, հայրանուն, ազգանուն ստորագրություն

2) _____ _____
Անուն, հայրանուն, ազգանուն ստորագրություն

3) _____ _____
Անուն, հայրանուն, ազգանուն ստորագրություն

4) _____ _____

**Ուղևորներ կամ ականատեսներ՝ Անուն, հայրանուն, ազգանուն ստորագրություն

1) _____ _____
Անուն, հայրանուն, ազգանուն ստորագրություն

2) _____ _____
Անուն, հայրանուն, ազգանուն ստորագրություն

3) _____ _____
Անուն, հայրանուն, ազգանուն ստորագրություն

4) _____ _____
Անուն, հայրանուն, ազգանուն ստորագրություն

* Բյուրոյի կողմից պատահար սպասարկողին տրամադրված գրանցման համար
**Լրացվում է եթե այդպիսիք ներկա են